


Ընդհանուր տեղեկություններ



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի 12.08.2014թ. թիվ 294-Լ որոշմամբ հաստատվել է **Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության կարգը**: Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ստեղծելու անհրաժեշտության հիմքում դրվել են հետևյալ հանգամանքները՝

- Հայաստանի Հանրապետությունում փաստաբանության՝ որպես արդարադատության համակարգի կարևորագույն ինստիտուտի զարգացման և մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորման համար կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող այլ պետության փաստաբանների իրավունքների պաշտպանությունն ապահովելը, ինչպես նաև այդ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելը,

- փաստաբանների իրավունքների պաշտպանության հարցում Փաստաբանների պալատի առջև դրված խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է միասնական, նպատակաուղղված և համակարգված քաղաքականություն իրականացնող կառույցի առկայություն:

Հանձնաժողովի նպատակն է միջոցներ ձեռնարկել փաստաբանների իրավունքներն ու մասնագիտական գործունեությունը բոլոր տեսակի (հատկապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների) սպառնալիքներից, խոչընդոտներից կամ ցանկացած տեսակի այլ հակաիրավական միջամտությունից (ոտնձգությունից) պաշտպանելու համար:

Իր նպատակի իրականացման համար **Հանձնաժողովի առջև դրված են հետևյալ խնդիրները**.

1. հավաքագրել և վերլուծել փաստաբանների մասնագիտական իրավունքների և Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված երաշխիքների խախտման վերաբերյալ տեղեկատվությունը.
2. քննության առնել փաստաբանների մասնագիտական իրավունքների և Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված երաշխիքների խախտման վերաբերյալ փաստաբանների դիմումները կամ լրատվամիջոցների հաղորդումները.
3. հրատապ արձագանքել փաստաբանների իրավունքները խախտող միջադեպերին և ձեռնարկել համապատասխան միջոցներ այդ խախտումների վերացման ուղղությամբ.
4. Փաստաբանների պալատի խորհրդին և նախագահին ներկայացնել համապատասխան առաջարկներ (ընդհուպ՝ օրենքի նախագիծ) փաստաբանների իրավունքների խախտումների վերացման և կանխարգելման համար անհրաժեշտ միջաջառումներ ձեռնարկելու համար.
5. վերլուծել արձանագրված խախտումները և վարել համապատասխան վիճակագրություն:

Հանձնաժողովը Փաստաբանների պալատի մարմին չի հանդիսանում: Այն կազմավորվում է Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ՝ **մեկ** տարի ժամկետով և **կազմված է յոթ անդամից, որից մեկը Փաստաբանների պալատի նախագահի կողմից նշանակվում է որպես Հանձնաժողովի համակարգող**: Հանձնաժողովի անդամ կարող են լինել փաստաբանները:

Հանձնաժողովը գործում է օրինականության, հավասարության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա, իր լիազորություններն իրականացնելիս անկախ է Փաստաբանների պալատի խորհրդից, նախագահից և այլ մարմիններից:

Հանձնաժողովը՝

1. փաստաբաններից ստանում է տեղեկություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից փաստաբանների, ինչպես նաև վերջիններիս վստահորդների իրավունքների խախտումների մասին.
2. իրականացնում է սույն Կարգի նպատակից և խնդիրներից բխող և անհրաժեշտ այլ լիազորություններ:

Հանձնաժողովն իրավասու է նաև՝



Լիանա Բալյան
Հանձնաժողովի անդամ
Փաստաբան



Արմեն Տերոյան
Հանձնաժողովի անդամ
Փաստաբան



Դիանա Շախրամանյան
Հանձնաժողովի անդամ
Փաստաբան



Էմին Բեգլարյան
Հանձնաժողովի անդամ
Փաստաբան
